

281(3)

u-18



ՍՏԵՓԱՆՆՈՍ ԲԳՈՆՅ
ԱՐՉԻԵՊՍ ԵՒ ԱԲԲԵՅ

Henry Meyer sculp. London.

✓ -

281(3)

ՆԿԱՐԱԳԻՐ

Ա-18

ՎԱՐՈՒՅ

ՍՏԵՓԸՆՈՍԻ ԱԳՈՆՅ ԳԻՒՎՂԻՐ

ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԲԱՅԻ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՍՊԵՏԻ

ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՓԱՅԷԼԻ ՂԱՐԱՄԵԱՆ

2983

A
374



Ի ՎԷՆԷՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1825

34033 W

LIBRARY OF THE UNIVERSITY OF TORONTO

100 St. George Street, Toronto, Ontario

Canada


Acquired by the University of Toronto

from the collection of the

Department of the Interior

U806-9440 E
1952 (P)

~~1645~~



~~6215~~

Վ Ա Ր Ո Ւ Յ

ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ե Ի

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՅԻ

ան . Վայ մեզ առաջի՛ արձանագրել բանիւ ըզ-
 վարս առն՝ որ հաստատութեամբ կէտ նպատակի
 կացոյց յանդիման իւր զաւետարանապատում
 խրատուցն կատարումն : Օ վարս առն Մտուծոյ՝
 ում ՚ի մանկութենէ նուիրեցաւ անքակտելի սի-
 ըով . որում ՚ի կեանս իւր սպաս տարաւ անխոնջ
 ժրութեամբ . զոր փառաւորեաց ՚ի ծերութեանն՝
 ՚ի վար արկեալ ըստ օրինի զբարձրապատիւ աւա-
 դութիւնն : ՚Ի սմա քաջայայտ ցուցաւ՝ որչափ
 դերասպանձ երևեցուցանեն զմարդ՝ կենդանի
 աստուածալաշտութիւն և իմաստասէր զգօնու-
 թիւն՝ կցորդեալք ՚ի միասին . զի թէ աստուած-
 սիրութիւն վերամբառնայ զմարդ յաղբիւր անդր
 արարած բնութեանս , և զգօնութիւն զարդա-
 րեալ իմաստութեամբ և ուսմամբք՝ երջանկացու-
 ցանէ զմարդ յաստիս ըստ ներելոյ սլայմանի սո-
 րա , ապա ուր երկոքին այսոքիկ հանդիւրեցին
 միմեանց՝ անդ բովանդակեալ է յաշխարհի մարդ-
 կային բնութեանս վայելք անդորրաւէտ : Մ. Ե.

պէս ետես աշխարհ զարժանապատիւ զՍտեփանոս Աբբաճայր, որչափ յաստուածպաշտութեանն վեհագոյն էր, նոյնչափ և յիմաստասիրութեանն արգոյ, և յարդիւնան շահեկան: Աեանք սորա ուսուցեն, քանի՞օն արժանաւոր է պարժանաց՝ համանդամայն ստանալ զազնուական քաղաքականութիւն ընդ երկնային առաքինութեան:

բ. Օնաւ սա ինքն Ստեփանոս վարդապետ Աբբեպիսկոպոս՝ Արրորդ Աբբայ Սիաբանութեան Սիսիթարեանց ՚ի Շուրճով քաղաքի՝ Վրանսիլվանիոյ՝ յամի տեառն 1740. ՚ի նոյեմբերի 20, անուանեալ ՚ի սուրբ Սկրտութեանն Ամբրայ: Հայր նորա կոչէր Վրիգոր՝ մականուանեալ Վիւվեր՝ ՚ի տոհմէ Ագոնց. և մայրն՝ Աջատ անուն խնկանոսեանց: Օհնութիւն ազգատոհմի նորա և զճողացն ազնուականութիւն դրուագել առաւելագոյն բանիւ, կամ ընդ հակառակն՝ թողուլ լռել ամենեւին, երկոքին ևս ընդ սողտանօք են. իսկ համառօտիւ յիշատակելն՝ կարևոր դատեալ է:

գ. Որպէս հասուցանէ մեզ վաղեմի հաստատուն աւանդութիւն՝ ազգատոհմն Ագոնց մի էր ՚ի ցեղից անտի գաղթելոց յԱյրարատեան աշխարհէ՝ ՚ի դղրդել հրաշակերտ Անի քաղաքին տասնութեամբ և աւերութեամբ՝ յամին իբրև 1330, որոց տարադէմ գնացեալ անկան ՚ի Վերսոն, այսինքն ՚ի Սրիմ, և շուրջ զկողմամբքն զայնոքիւք, մինչև հասեալ ամրացան ՚ի Վրանսիլվանիա Ունկարիոյ յամին 1654. ուր տանութեարք Ագոնց և այլ ևս ազատ որեարն հաւատարիմ դտեալք ՚ի դուռն Աստրիական Ինքնակալութեան՝ պատուեցան ընդ նախարարս Ունկարաց. և երեքին քաղաքքն յորս բնակեցին,

Պաշպալուլ, Կէռւէ, և Ղուրճով՝ անուանեցան
ազատ կամ Ստանիկ քաղաքք արքունի :

Գ. Լս Տին ազգատոհմ՝ Լճոնց մինչև ցայսօր
պատուեալ է յարքունի գործակալութիւնս, զի
բազումք ՚ի մերձաւոր ազգականաց Ստեփանոսի
Բաբունապետի, եղբորորդիք նորա և քեռորդիք
ունին զիշխանութիւն արքունի խորհրդականաց
և զանձապետաց ՚ի Թլումլար քաղաք, ՚ի Պուտա,
՚ի Լուհօշ, և յայլ քաղաքս . յորս հասանէր և
րեւելի լինել և ամա՛ թէ փափաքէր դեզերել յաշ
խարհի . այլ լքեալ զամենայնն՝ զխոնարհութեան
սիրեաց ճանապարհ, յոր դեր՚ի վեր բարձրացոյց
զնա խնամակալութիւնն Մտուծոյ : Թէպէտ ազ
նուատոհմութիւն մարմնաւոր՝ սաստը լինի և մշ
խիւք, թէ հոգւոյն ազնուականութիւն պակաս
իցէ . մանաւանդ բազում՝ այն է՝ զի մարմնական
մեծութիւն խափան արկանէ հոգեկանացն . սա
կայն ուր միանգամ անաղօտ մնացէ փայլումն սրբ
ութեանն առ աշխարհի ազնուատոհմութեամբ,
և որ զիտացէ զմարմնական փառաց զպատճառսն
ծառայեցուցանել ՚ի սպաս հոգեղինին, անդ առա
ւելագոյն պարծանք են նմա : Վանդի և այս ան
երկմտութեամբ հաւաստեալ է՝ թէ հայրենի ազ
նուատոհմութիւն՝ վսեմ խորհուրդս ազգէ ՚ի մար
դումն, և զիւրագոյնս վառէ ՚ի հանդէս առաքի
նութեանց : Օտոյն այսպէս գլխաւորեալ տեսաք
յառաջի մտտուցեալս, զորմէ մեր բանքս են :

Է. Օնուանդ նորա, և զառ ՚ի տղայութենէն
պատրաստութիւնն առ մեծամեծս յոր Մտուած
առաջնորդել ունէր նմա՝ ՚ի բարեպաշտութենէ
և յազնուութենէ ծնողացն է իմաստասիրել . որք
զօրինակ անարատ վարուց իւրեանց մարթացան
սպաւորել ՚ի հոգւոջ մանկանն Միրայի, և սնու

ցանկել զնա յերկիւզն Մատուծոյ . որով բնաւորեցաւ 'ի վսեմութիւն խորհրդոց , 'ի քաղցր կենցաղավարութիւն , յաշխոյժս և յեռանդն :

Կ. 'Խ տասնամեայ տիւս մանկութեան ետուն զնա 'ի դայրոցս ուսմանց . յորս զարգացաւ 'ի հրահանգս պարկէշտ վարուց . վարժեցաւ 'ի Մատին և յԱնկարաց բարբառ . և ըստ օրինաց բարեկարգ վարժարանաց քաղցրացաւ 'ի ճաշակս դրութութեանց զանազանից : Այլ զի մանուկ էր մտաւ վարժ , և ըստ Սողոմոնի պարծանացն զանձնէ՝ ազնուակնանադոյն հոգւոյ վիճակեալ , ոչ ընդ վայրինչ դեգերէր յաշակերտութիւն ուսմանցն . այլ որչափ յառաջ խաղայր 'ի նոսին , և միով ուսմամբն այլում մեծագունի և կարեւորագունի հիմնարկանէր , նոյնչափ լիազոյնս խելամտէր յանձին իւրում թէ կատարեալ իմաստութիւն յերկուս յայտոսիկ սահմանի . յեռանդուն աստուածպաշտութիւն , և 'ի ժիրաժիր ուսումնասիրութիւն : Այս սնդեալ միանգամ՝ ընդ իւր տարաւ զայն մինչև 'ի կատարած բազմարդիւն կենացն . և մեք յամենայն 'ի բանս նորա զայս սքանչելի ճշմարտութիւն ստէպ լեւաք 'ի նմանէ , ընդելուզանելի գոլ զգիտութիւն ընդ բարեպաշտութեան :

Կ. Առաջէլ տիոցն ցեօթնեւտասն ամ՝ յորում վառի , յեռանդն հարկանի բնութիւնս , և այսր անդր շարժել տազնասկէ՝ մինչև զփափաքելին զըտանիցէ , սկսանէին խորհուրդք ելանել ընդ միտս նորա . այն՝ թէ զոր վիճակ , և զոր տարազ կենաց ընտրեսցէ անձին իւրում . զի զհայրենի ազնուատոհմութիւնն զուգաւոր տեսանէր իւրում արիութեանն . զդեգերելն և եթ յուսմունս՝ դիպողագոյն քաջութեան մտայն . անդուստ դարձեալ և զեկեղեցականաց պարապելն յԱստուած՝ սիրելի

եւրդձալի փափաքանացն : Վ մէն մի սոցանէ տա-
րուբերէր զնա բնութեանն ազգեցութիւն , մտա-
խոհ լեալ 'ի միտս իւր թէ զժրն կալցի իւր սեպ-
հական : Սակայն զի ամենայն իրաց մարդկան տե-
սուչ՝ յաւէժ Մտուած է , տնօրինեաց նմա զիրսն
սքանչելի օրինակաւ :

Ը • Վեպ լինէր նմա երթեւեկել 'ի Պաշպալով
քաղաք առ ազգականս իւր , և յայնմ քաղաքի
ծանօթացեալ մտերիմ սիրով ընդ ձեռասուն և
շակերտի Սիսիթարայ Մբբահօր ընդ Հ . Վարա-
պետի վարդապետի կոստանդնուպօլսեցոյ հոգե-
լից առն , որ էր առաքելաձայն քարոզ ճանապարհ-
հին սպաշխարութեան , լուաւ երբեմն յեկեղեց-
ւոջ զնորայն հօր բեմբասացութիւնն յաղագս
վտանդից աշխարհի , և անդորրութեան խաչակիր
կենաց : Հայնմհետէ սիրտ նորա վառեցաւ՝ գոր-
ծով 'ի զլուխ հանել զլուեալն 'ի վարդապետէն՝
զհետեութիւն ճանապարհին հոգեւոր կենաց , և
մտանել 'ի կարգ Սիսիթարեան աշակերտացն . վասն
զի բանք նորա հարան 'ի խորհուրդս պատանւոյն
իբր նետից սլաքք երկնառաք՝ վարսեալք 'ի ճար-
տար որսորդէն 'ի բանաւոր եղջերուն : Ստադիւ-
րագոյնս քննեալ զիրսն յանձին իւրում , ապա մա-
տեաւ առ որսորդն իւր , ծանոյց խոնարհութեամբ
զոր ինչ երկնէրն 'ի մտի , աղաչեաց՝ հրաման ընդ-
ունել 'ի հօրէն իւրմէ վասն իրացն կատարման :
Հայր նորա 'ի լսել զայն՝ պատճառանս պատճա-
ռէր , օր 'ի յօր յերկարէր՝ յայտնի պատասխանի
տալ վասն իրացն . քանզի յանդրանկութիւնն նա-
րա հայեցեալ , 'ի յառաջագիմութիւնն , և առ-
հասարակ 'ի ներքին և յարտաքին քաջադիպու-
թիւնն , ըստ աշխարհի խորհէր յարդարէր զնա
'ի տանուտէրութիւն տան իւրոյ . ոչ գիտելով

յոր տանուտերու թիւն հանդերձեալ էր Մատու-
 ծոյ վերամբառնալ զնա : Որչափ ծնողքն հակա-
 ոակէին յօժարութեան նորա, սա այնչափ հալէր
 և մաշէր 'ի սրտէ, և հիւժէր 'ի կայտառ և 'ի պայ-
 ծառ գեղոյ վայելչութեան իւրոյ, տարածանէր
 զանձն առաջի Մատուծոյ՝ և Տիրամօրն, առ 'ի
 նմանէ միայն խնդրելով զփափաքանայն կատա-
 րումն . զի մարդկային հնարք բովանդակ փակե-
 ցան ընդդէմ՝ նորա . դառնացան նմա ամենայն
 գգուանք մարմնոյ . զի ինքն զատուածային իմաս-
 տութիւնն խնդրեալ և սիրեալ էր 'ի մանկութե-
 նէ, և ցանկացեալ գեղոյ նորա :

Թ . Ետ բուռն և սաստիկ դօտէմարտութեան՝
 տարաւ զմրցանակն, զի հաւանեցուցեալ զծնողն
 և զմերձաւորս, և առեալ իւր զօրավիզն զհայրե-
 նի օրհնութիւնն, փութացաւ 'ի ճանապարհն :
 Աւ զի յաւուրնն յայնտսիկ 'ի Սէնէտիկ դառ-
 նալ դէմ եղեալ էր և Հ . Վարապետի, ուղեկ-
 ցութեամբ նորա եհաս 'ի վանս սրբոյն Վազարու-
 յամին 1757 . 'ի յուլիսի 25 . ուր զուարթացաւ
 սիրտ նորա ընդ տեսիլ մենարանին . և յետ միոյ
 ամնոյ 'ի վերայ անցանելոյ 'ի 24 օգոստոսի ընկաւ
 լաւ 'ի ձեռաց Ստեփանոսի Մբաջօր Սեղոնեան
 զսրբեմ Սիսիթարեան Սիաբանիցն, և մտեալ 'ի
 կարգ Սորընծայութեան՝ անուն նոր կոչեցաւ նմա
 Ստեփանոս, որպէս առ կարի սիրելութեան շնորհ
 հելով նմա առաջնորդին զիւրահանն անուն, Մնդ
 'ի դիմի հարաւ փափկասուն անձն ազնուական՝ ու
 խերիմ՝ մարտիւ ընդ դիւրութիւնս մարմնականս,
 ուխտ եղեալ ընդ անձին իւրում՝ ոչինչ 'ի հեշտաւ
 լեաց շնորհել զգայութեանցն . և այն զի յայնմ
 հասակի սաստկազոյնս կռուել սովորեցին կարիք
 բնութեան : Ս անն զի բաց 'ի կանոնադրեալ ըզ-

զուշու թեանցն ըստ ամենայն սահմանեալ ժամուց
 'ի Աորընծայարանին, բաց յառանձնապահան աղօ-
 թիցն հրամայելոց, բաց 'ի չվրիպելոցն 'ի հասարակաց
 ժամակարգութեանց համախմբութիւնս, բաց 'ի ժամանակեալ մտաւորական քննութեանցն,
 բաց 'ի վանական բարեձևութեանցն, զիտաց նա
 բարխոք 'ի գործ մատուցանել զիւրաքանչիւր դէպ
 ժամանակ և զպատեհութիւն՝ մարզել զանձն 'ի
 նոսին 'ի պէսպէս կրթանս, յեղբայրսիրութեանն
 ջանս, յառանձին աղօթակացութեանց և պահոց
 փոյթ՝ ըստ շնորհելոց հնազանդութեան, 'ի կամաւ
 ւոր խոշտանգանաց եռանդն, 'ի խոնարհութեան և
 'ի նուաստութեան գործս, որովք հնարէր անարդ
 և ընկեցիկ երեւցուցանել զանձն 'ի մէջ ընկե-
 րացն իւրոց, և զտոհմային ազնուականութիւնն
 ողնչացուցանել ընդ ցածուն կերպարանօքն :

Ժ. Օ այս ամենայն խորագոյնս զննեալ հոգևոր
 վերակացուաց նորա՝ յառաւելն անդր առաջնոր
 դէին նմա 'ի շաւիղս աստուածակոխս. որովք հա-
 սեալ 'ի հանդիպակաց կէտ նպատակին՝ մատոյց
 զինքն բոլորանուէր պատարագ Աստուծոյ, հանդի-
 սապէս յանձին կալեալ զուխտս կրօնաւորականս
 յամին 1758. 'ի հոկտեմբերի 28. դաշն եղեալ ընդ
 Արարչին՝ ցանգ ժուժկալել յանընչութեան, 'ի
 հնազանդութեան և 'ի սրբութեան, զոյգ ընդ
 յանձնառութեան առաքելաբար քարոզ լինելոյ
 ճշմարտութեան արեամբ չափ: Օ որ ինչ յայն
 ժամ ուխտիւք յանձին կալաւ՝ զայն անվրէպ ու-
 ներ առաջի աչացն. և աւուր աւուր զսաղմոսեր
 գողին յիշատակելով թէ այժմ՝ սկսայ՝ մինչ 'ի կա-
 տարած կենացն ընդ իւր կալաւ, և միշտ աճե-
 ցոյց. բազմազանձ ճոխացուցեալ զարդիւնս նո-
 ցին՝ 'ի շահ անձին իւրոյ, և յօգուտ տեսողացն :

Ընդ այլ ամենայն հրահանգս բարեաց յաւելի նոսին զանդրդուելի ապաւինու թիւն ՚ի խնամն Ղստուածամօրն՝ յորոյ ՚ի գթութիւն անկեալ էր ՚ի մանկու թենէ, և աճեցոյց մինչ ՚ի ծերութիւն պարարտութեանն, միշտ զօգնութիւն նորա ջեր մնդոյնս կարդալով ՚ի ծանր ծանր նեղութիւննս որոց տարաւ յառաջնորդութեանն: Այդպիսի ասել զառ Ղստուած սիրոյն զտեսչմունս անթարգմանելիս՝ հանդերձ ցուցակութեամբ արդեանց, առաւելապէս նշանակաւ նորին՝ ճշմարիտ մարդա սիրութեամբ, զոր ոչ միայն առ կենդանիս, այլև առ ննջեցեալս առանձին գթով տարածանէր. զի ուր ծանր իրողութիւնք նմա ընդ առաջ էլանէին՝ հրամայէր զաէրունական պատարագն մատուցաւ նել ՚ի նպաստ հոգւոց ննջեցելոցն:

Ժն. Իսկ եթէ որ զհանդէս ուսումնասիրութեան նորա գիտել կամիցի, աւասիկ բազմամա տեան վաստակք նորա վկայեն իրացդ: Արպէս վերագոյնդ ասացաւ, խելամտեալ նորա թէ որչափ որ յաւելուցու ՚ի գիտութեան՝ այնչափ պարտ և արժան է նմա աճեցուցանել զաստուածսիրութեանն ջանս, զի յորժամ միտք զուարթանան գիտութեամբ՝ անդրագոյն ձգին ՚ի խորս աստուածգիտութեան, և առաւելագոյն փութով յօժարէ սիրել զՂստուած, այնր աղագաւ ըստ առաջնորդել կարգի Ղեմարանիս մերոյ՝ ՚ի գլուխ հանեալ զհայերէն լեզուիս հմտութիւն լիուլի, և զյառաջնմէ սխեալնս զունկարերէն և զլատիներէն, յաւել ՚ի նոսին զիտալերէնն, և զայլոց ևս լեզուաց տեղեկութիւնս, յետոյ միտ եդ ՚ի բարձրագոյնն: Աւաս զբանասիրականն և զգեղեցիկ ուսմունս, յորս զուարճացաւ իբրև յիրս զուգաւորս ազնուական բնութեան իւրում. զիմաստաւ

սիրականն եղիտ արժանի զգօն մտացն . և զաստ
 ուածաբանականն իբրև պատրաստութիւն քահա
 նայական աստիճանին՝ յոր կարգեալ էր կոչումն
 իւր և վիճակ : Եւքն թէպէտ 'ի սոսին հաստատէր
 զնպատակ ջանիցն , ոչ 'ի վերագոյնս ինչ ակն զնե
 լով , յորոց հեռի են հոգիք սրբոցն , այլ աստուա
 ծային ծածուկ տեսութիւնն արկանէր ընդ քիմն
 նորա զուամանցն քաղցրութիւն , որպէս զի 'ի դէպ
 ժամանակի ջամբել մարթասցէ զնոցին ճաշակս լի
 և զեղուն 'ի սիրտս առ 'ի նա յանձնեցելոցն :
 Ապաքէն այլք ևս 'ի դասակցաց նորա առ յիշա
 տակէ , ծանուցեալ են յազգի մերում՝ բազմաբ
 դիւն մատենագրութեամբք , և այլովք ևս արա
 բովք , այլ տրա քաղցրութիւն , հանդարտու
 թիւն , բարուցն ազնուութիւն , հոգւոյն արթնու
 թիւն , մտացն ժրութիւն , և որ այլ ևս՝ գերօրի
 նակ զնկին զնա առ ընկերօքն : Սինչև անդատին
 յերիտասարդական տիոցն վկայել բազմաց՝ թէ
 հանձար մեծախորհուրդ , և միտք առաջնորդա
 կան 'ի նմա հանգուցեալ են իբրև 'ի պատշաճեալ
 գահու . և զոր նախագուշակեցինն՝ ոչ յապաղեաց ,
 այլ 'ի մօտոյ բանքն և բղձութիւնքն արդիւնք ե
 ղեն : Օ այս միայն ասասցուք , թէ յետ 'ի գլուխ
 հանելոյ զուամանց իւրոց զհրահանգան , այնուհետև
 անդադար զամն յիսուն և աւելի՝ ոչ պակասեաց
 'ի ձեռանէ նորա առաջնորդական իշխանութիւն
 առաւելեալ հետզհետէ . և ոչ դադարեաց բարի
 առնել Սիաբանութեան իւրում և Աջգին :

ԺԵ . 'Ի լրանալ ուամանցն՝ ձեռնադրեալ քա
 հանայ յամին 1763 , 'ի Վազարայ վարդապետէ
 (որ թողեալ զՏրապիզոնի առաջնորդութիւնն՝
 անցանէր առ սահմանօք Վէնէտկոյ) , և կա
 տարեալ զհանդէս աստուածաբանական մարզու

Թեանցն, ամբարձաւ 'ի պատիւ վարդապետու
 Թեան՝ որպէս վայել իսկ էր հասարեակ իմաստու
 Թեան նորա : Օր իբրև պատշաճեցոյց անձին
 Ստեփանոս վարդապետ, և զուարճացոյց զամե
 նեսին, այնուհետև խորհուրդ և բնորու թիւն և
 բիցադունից մակացու լեակ իմաստու Թեան և հա
 ւատարմու Թեան նորա՝ մինչև զերեմեքորդ ամ
 հասակին հասարեակ էր՝ ետուն նմա սանդ զոյս
 բովանդակ Սիարանու Թեանս, որպէս ասուին բազմ
 արդիւն է, և հորուսան անդարման. ամենայնիւ
 նմա յանձն արարին զվերահացու թիւն մանկանց
 յօժարելոյ մտանել 'ի Սիթիթարեան աշակերտու
 թիւն. 'ի նա ստանձնեալ զհոգևորաց և զուսում
 նականին ծանրաբեռնու թիւնն :

ԺԳ. * Արցեցաւ նա յորդիւն յանձնեալս նմա,
 և զմարդարեթին երկրորդեաց, ո՞րն ծնաւ զս
 ա, զի ևս մենացեալ էի և անզաւակ : Այլ և
 առ նմին 'ի վերայ բերեալ թէ սքա որդիք իմ
 են զորս ետ ինձ Մատուած, ակնարկեաց և 'ի
 պարաս իւր, և զերկուս զայտասիկ կիտաղրեաց
 անձին իւրում 'ի գլուխ հանել անվրեպ. առա
 ջին՝ հրահանգել զնոսա 'ի պարաս կրօնաւորու
 Թեան յոր կոչեցանն, առնել զնոսա նմանողս իւր.
 Երկրորդ՝ մարդել զնոսա յուսմանն բազմազարդս,
 յորս տարփացեալ էր հանձար նորա և միտք լայ
 նախորհուրդ : Հասաջնուին՝ արձանացոյց զինքն
 առաջի իւրոյ սիրելի որդւոյն օրինակ շինու Թեան,
 և զվարս իւր անարատս՝ մատոյց նոցա օրէնս և
 հանտն նմանու Թեան, առտակ բան զբանից ազ
 դեցու թիւն : Շարտարամեակայ՝ յերիւրել զանձն
 ըստ զանազանեալ բնաւորու Թեան մանկանցն, առ
 'ի վերայ կալոյ յօժարու Թեանց նոցա և ներթին
 ծածուկ շարժու Թեանոյն. զի ըստ իւրաբանելիք

սխտոյիցն սատշաճեցուցել զվարդապետու թիւնն
 և զխրատս ուղղու թեանն : Միօրինակ խնամ
 կալաւ 'ի վերայ ամենեցուն՝ ջան 'ի գործ արկեալ
 ոչ միայն տալաւ որեւէ 'ի միտս նոցա թէ հրաժարեալ
 են յաշխարհէ և յամենայն պերճու թեանց նորա,
 այլ և զայն՝ թէ կայ մնաց նոցա վասն աշխարհի
 աշխատել, վասն ազգին իւրեանց քիրան և տա-
 ւապանս յանձն առնուլ, և այն առանց փոխարիւ-
 նի, մանաւանդ թէ հալածանօք հանդերձ : Հայս
 սակս փութացաւ խելամնել զնոսա թէ զինչ է
 կենցաղս, և վաստակաւորայն 'ի նմա որպիսի ինչ
 խորհուրդս պարտ իցէ յանձին ունել : Օտցն
 կէտ նպատակի եղեալ էր իւր մեծին Միսիթա-
 րայ, և 'ի նոյն նմանապէս ակնարկէր զգօնու թիւն
 Ստեփանոսի վարդապետի : Հերկրորդումն պըն-
 զեաց զանձն՝ ձեռն արկանել անվեհեր յամենայն
 ուսմունս օգտակարս, վասն որոյ սխեալ 'ի մա-
 նունայն մինչև 'ի բարձրագոյնան նորանոր զարդու-
 ուսումնասիրութեանց աճեցոյց զգարատուն իւր,
 և զաշակերանն ճոխացոյց հանձարով և իմաստու-
 թեամբ :

ԺԴ. Հիշատակարանք և աւանդութիւնք Ղե-
 մարանիս յայնարանու թեամբ ունին թէ 'ի ձեռն
 նորա սկիզբն կալան բազմազէմ սխտանի զսրու-
 թիւնք 'ի չտիարեքականն, 'ի քերթողականն, 'ի
 բանասիրականն, 'ի մեծանուն մտտենադրաց սե-
 ղեկու թիւնս, յազատական արուեստիցն վարժս,
 և որ այլ ևս ըստ նոցուն տարազու. զի յ՛ր ինչ
 և ձեռն արկանէր, և յ՛ր ուսումն վարէր զաշա-
 կերանս, զիրիպեր 'ի յուսոյն : Հաւել 'ի սոսին և
 զհայրենի հայկաբանու թեանն պերճու թիւնս. զի
 յամենայն գիրս նախնի մատենադրաց մերոյ խնա-
 մով յաճեալ, և զանձեալ 'ի յիշողականին զըն-

տիր ընտիր նոցայն բացատրու թիւնս, հասարակաց
 եղ զբաղցրու թիւն հայրենի բարբառոյ մերոյ, զոր
 վասն լաւ ևս յղկելոյ, և շննապարհ կազմելոյ
 ամենեցուն 'ի մնտենագրու թիւն հայերէն, զոր
 գտանէր 'նուազեալ 'ի հարազատութենէ, ձեռն
 արկ յօրինել և տպագրել զգիրս Պարտարախո-
 սութեան յամին 1775, ըստ կանոնաց քաջ վար
 ժապետացն Արիկերնի և Ալուինաթիլանտիս, Աւ զի
 տեսանէր զազգ մեր 'ի բազում գոյրութեանց թերի
 և կարօտ, հոգացաւ յաւելուլ 'ի նմին բազում
 ինչ պիտանի 'ի յօրինուած տաղաչափութեանց
 և ազգի ազգի քերթուածոց. որպէս զի սակաւ
 ւուք բազում գործ վճարեցէ: Օրւարձացան
 ամենայն ընթերցասէրք ազգիս մերոյ ընդ այն գիրս
 նորա. զի յետ սպառելոյ հայրենի բարեզարգու-
 թեանցն առաջնոց՝ մինչև ցայն վայր ոչ երևեցաւ
 մնտեան այնպիսի. վասն որոյ իբրև ծարաւիք դի-
 մեցին 'ի գիրս նորա, և մեծապէս զմայլեցան ընդ
 շահն որ 'ի նմանէ. և յայնմհետէ զհամբաւի
 հարաւ քաջութիւն անուան նորա ընդ ոլորտս
 հայաստանեայց: Ըստ ինքն 'ի փառաց մարդկայ-
 նոց խորշեցեալ բովանդակ յայն ջանայր՝ անարատ
 'ի գլուխ հանել զբազմաբիրան ձեռնարկ վերակա-
 ցութեանն զհաւատացեալն նմա յառաջնորդէն,
 մանտանդ թէ յՊատուծոյ:

Թե. Պանրաբեռն տաժանումն է կրօնասէր
 վերակացութի՝ զնեքրինս տեսանել զսրաից աշակեր-
 տելոյն. և բնաւորութեան նոցա նախատես գա-
 լով թէ մարթացեն արդեօք մինչև ցվախձան
 տանել լծոյ կրօնաւորութեան, կարասցէ ըստ նմին
 յառաջ մատուցանել զինգրողն, կամ 'ի բաց
 հրաժարեցուցանել: Ըստ ընտրութիւն միոյ միոյ
 յաշակերտայն՝ յայս կիրս տազնապի տանջէր Ստե

փանտոս վարդապետ, և աղօթիւք և անդադար
 ինդրուածովք հնարէր զէջս իրացն. զի ոչ գոյզն
 ինչ է վասն ազատայիցն երաշխաւորել: Այլ կղե
 վարանել նմա վասն միոյ 'ի նոցանէ՝ որոյ ընթացք
 վարուցն միօրինակ երեւեցուցանէր զլաւութիւնն
 և զյոռութիւն. զի յերկուց կողմանց գրեթէ: հա
 ւատար բերէր զնժարն, և ոչ թողոյր վերակացուին
 գիտել արարար զիրացն հանդամանն, և ըստ
 նախն մատուցանել զնա յուխասկրօնաւորութեան,
 թէ 'ի բաց որոշել: Աբրեւ յամենայն կողմանց
 հնարք և սատարք մարդկեղէնք լուցին 'ի վար
 դապետէն, ապա յՆստուած ըզերձեալ զմիտն
 և զյոյս, առանձնանայ յաւուր միում՝ յեկեղեց
 ւոջ, տարածէ զանձն առաջի ջերմեռանդն և ցա
 ւազին պատկերի Տիրամօրն, ընդ ժամն ձիզս ար
 տասուօր ազուէ: զնա՝ ձեռն տալ իւրոց տարակու
 սանայն, և լիազոյս յայտնել զորպէսն պատան
 ւոյն, զի մի սնխորհուրդս ինչ գործեցի: Օ այս
 արարեալ նորա՝ ոչ անցին աւուրք բազումք, զի
 պատանին ինքնին մատուցեալ ինդրեաց զհրա
 ժեշտ արձակմանն, և զգարձն յաշխարհ: Ըստ
 պատահումն սնդագոյն հաստատեաց զյոյս նորա
 առ Տէր, և սովին խրախուսեաց կատարել պար
 ծանօք զգործ վերակացութեանն:


ԺԿ. Ըստ առ նախն մատուցալ 'ի նա փորձութիւն
 յաստուածակոյս կողմանէ՝ բննել զհաստատու
 թիւն սրաի նորա. ոչինչ նուազ՝ թէ ասել արժան
 իցի, յարբահամեան պատարագէն՝ 'ի հրամայել
 անդ Մատուծոյ զենուլ զորդին յողջակեղ. զի
 թէ անդ կենդանի չտրհեցաւ զաւակն 'ի ձեռս
 հօրն, աստ 'ի ձեռաց հօրն կորեցան որդիքն: Ս
 ասն զի այն ինչ հասոյց զաշակերտան 'ի լափ
 հասակի կատարելութեան՝ հիւանդութիւն իմն

զայրագին հարաւ ընդ մին 'ի նոցանէ յընտրելա-
 գունից. և զի տարափոխիկ թուէր ախտն, երկեալ
 մի ճարակեսցի և յայլ, մանաւանդ յընկերս նո-
 րա, արդէլ զամենայն մարդ մերձենալ 'ի սպասա-
 ւորութիւն ախտացելոցն. ինքն միայնակ եմուտ
 'ի փորձ անդր, թէպէտ աղէտք ցաւոց տագնա-
 պէին զսիրտ նորա, թէպէտ և գթոփն ճենձերէր
 'ի վիշտս որդւոցն. այլ նա արիութեամբ տանէր
 հասելոյ ծանրութեանն, մինչև ցլետին անարգ
 սպասաւորութիւն մտադիւր սիրով կատարեաց,
 ոչինչ քամահանս վարկուցեալ վարդապետական
 պատուոյն իւրոյ. նա և պատճառս իմն խնդրէր
 մեռուցանել զանձն յայն ամենայն կամաւորական
 կիրս : Արդեօք ո՞ր ծնող մարմնաւոր այնպէս չար-
 չարեցաւ 'ի նեղութիւնս որդւոցն. զի սա ոչ միայն
 զբնական ցաւն ցաւէր ըստ օրինակի նոցա, այլև
 զբանականն և զյօժարակամն, որով այրեցաւ տու-
 չորեցաւ, մինչև ցլետին տուրեւառն շնչեաց որ-
 դին 'ի գիրկս հօրն, և պակասեաց 'ի կենացն :
 Սինչև մխիթարեալ էր 'ի վերայ դնացելոցն՝ զկնի
 տարւոյ միոյ միւս ևս յաշակերտացն սքանչելի առ
 աքիհնութեամբ. և պանծալի գրականութեամբ
 նորընծայ քահանայ՝ անկաւ յայլ ախտս դժնդակս.
 և անդ դարձեալ զնոյն առաքինութիւն առաքի-
 նացաւ վարդապետն, մինչ և զնա առ առաջնոփն
 հանդուցեալ, երկիր եպագ 'ի խորս սրտին իւրոյ
 անքնին դատաստանացն Աստուծոյ՝ որ բազմօրի-
 նակ գիտէ փորձել զմարդ. և 'ի նա դարձեալ
 հաստատեաց զանձն իւր՝ 'ի մխիթարութիւն սրբ-
 տին իւրոյ դառնացելոյ 'ի կենցաղականացս. զմար-
 դարէին ողբաձայնութիւնն միշտ առաջի աչացն
 ունելով՝ թէ բարերար է Աստուած 'ի վերայ
 համբերողացն իւրոց. բարի է որ համբերէ նմա

Ճշմարտութեամբ, և հանդի նա 'ի փրկութեան
 տեսուն: Այլն էրկամեմք ասել թէ, յայս ամե-
 նայն վշտակրութիւնս կանուխ սպառազինեաց
 զնա տեսու թիւնն աստուածային՝ զի արիասցի
 տանել հակառակաց, և մի վհատեսցի 'ի ձախո-
 զակ արկածից. որպէս զի երբ ամբարձեալ յա-
 թոռ աւազու թեանն՝ ահաւոր կոհակբ ընդդի-
 մութեանց հարկանիցին ընդ նա՝ հաստատուն
 կայցէ 'ի յոյս ապաւինութեան իւրոյ, և մերժեա
 ցէ քաջութեամբ զամենայն մարտից յարուցմունս:
 ԺԷ. Այլ զի ոչ էր արժան մնալ նմա ընդ գրուա-
 նաւ և 'ի թագստի, այլ միշտ 'ի հրապարակի լու-
 սափայլել, յետ կատարելոյ զգործ վերակացու-
 թեանն ընտրեցաւ յամին 1785. 'ի յուլիսի 5,
 Աթոռակալ և գործակից Մբբայական իշխանու-
 թեան յամենայն արարս Սիբեանութեանն որ 'ի
 ներքս և որ արտաքս: Հրաժեշտ նորա 'ի գործոյ
 անտի, և խոնարհութեամբ դժկամակութիւնն՝
 յաւէտ և ս գեր'ի վերոյ ցուցին զարժանապատու-
 ու թիւն նորա, և յամենայն Սիբեանից յաւելան
 'ի նա մեծարանք: Այլ սխալեցին յընտրութեանն,
 զի յարդարեալ գտին զնա ամենայն առաքինու-
 թեամբք պատկանաւորօք 'ի գործս օժանդակու-
 թեան առաջնորդին. վասն զի ընդ ամս հինգ յորս
 կալաւ զայն գործ՝ փայլեցոյց զխոհականութիւն
 իւր, զխոնարհութիւն և զքաղցրութիւն ընդ վա-
 նականս և ընդ օտարս: Յայն ամենայն զբաղանսն
 յորոց պակասեցոյց և ոչ մի՝ յաւելան նմա ընդ
 երկար ժամանակք զգրովք դեգերելոյ, զորոց
 զձաշակս բնաւ ոչ հեռի առնէր յիւրմէ. վասն
 զի ժրութիւն և արիութիւն ոչ երբէք կասին
 յօգտակարաց, թէպէտե ծանր ծանր արարք յոր
 դեալ զեղուցուն զնորօք. և այն ևս քաջայայտու-

1785

A / 475



Թեամբ ծանուցեալ է թէ քաջ մատենագիրք որ
չափ 'ի մեծամեծ արարս արտաքինս աշխատեցին՝
այնչափ դեր 'ի վերոյ գտան և զբաւորական ար-
դիւնք նոցա . քանզի ներհուն հմտութիւն յիրս
իրս աշխարհի, և խորհրդոցն շուրջ յածել զբա-
զում իրօք՝ լուսաւոր երևեցուցանէ զվարդապե-
տութիւն բանիցն, և 'ի տեղեկութիւնս փորձ :
Չեռն արկ օժանդակութեամբ աշակերտացն իւ-
րոց յօրինել կազմել ընդհանուր աշխարհագրու-
թիւն, և զհամօրէն տիեզերաց զհանգամանսն բռ-
վանդակել 'ի նոսին պարզ բանիք և դիւրիմաց
կարգաւ, ջանացեալ ծանօթ կացուցանել զազգ
իւր համատարած գնտոյս . զինչ ազգք կայցեն 'ի
ներքոյ երկնից, և քանի նահանգք թաղաւորու-
թեանց . զինչ լեզու նոցա և դպրութիւն, զինչ
օրէնք, և կրօնք, և արարք, և վաճառք : Յաւել
'ի նոյն և զհասարակախօսութիւնն իբրև իմաս-
տասիրական դուռն առ այն ընդարձակ գիտու-
թիւն . որպէս զի ոչ միայն 'ի միտ առցեն ընթեր-
ցողք զինչ տիեզերք են, այլև զնորուն զամենայն
զաստուածագիր օրէնսն ըստ կանոնաց փիլիսո-
փայութեան : Օ այս ամենայն 'ի մետասան հա-
տորս տպագրութեամբ 'ի լոյս ընծայեաց յառաջ
նորդութեան իւրում : Թնգ և զայլ հատորսն զև
տպագրեալսն, որք այրեցան 'ի Արտանդինուպօ-
լիս՝ ուր յղեալ էր 'ի ձեռն իւրոցն, վասն զկարև-
որսն քննելոյ յաղագս արևելեան ազգաց :

ԺԷ. 'Կ մշակել նորա զհայերէն դպրութիւն
վասն ազգին իւրոյ և հայրենեացն՝ մատեան և
օտարականք ուսանել 'ի նմանէ հայերէն : Սիմն
Լուստէ ոմն քահանայ Վաղղիացի՝ հրովարտա-
կաւ Լուիզի ժն. Թաղաւորի Վաղղիացոց եկեալ
'ի Վինէտիկ ուսանել 'ի վասն մեր հայերէն դպրու-

Թիւն , յանձն եղև Ստեփաննոսի վարդապետի՝ ուսուցանել նմա զբաղձացեալն . որ զամն երիս տքնեցաւ յայն գործ , ցանգ առ նմա կալով 'ի Թարգմանել նորա Հայոյ 'ի Վատին զհայերէն մեծ բառարանն . Թոզ և զայլ ջանս վարդապետիս 'ի վերայ Վաղղիացւոյն . որով կապեաց զնա ընդ ինքն , և իբրև զեղբայր իւր և զաշակերտ պարաւանդեաց զսիրտ նորա՝ հրաշալի տարացուցիւ իմաստութեան և վարուց իւրոց : Ընսպէս՝ զի փոխաւրէն գեղեցիկ երախտեացն՝ 'ի դառնալ նորա 'ի Վարիզ հետամուտ եղև կանգնել անդ արքունի ծախիւք վանս և բնակու թիւն վասն Սիսի թարեան վարդապետաց , և զնոյն ինքն զՍտեփաննոս վարդապետ կարգել 'ի դուռն Վաղղիական պետութեանն վարժապետ լեզուի Հայոց : Օայս անշուշտ 'ի գլուխ տարեալ էր նորա՝ եթէ աշխարհն Վաղղիացւոց ոչ այլափոխէր յայնժամ , և քաղաքական յուզմամբք ոչ տապալէր ամենայն բարեձևու թիւն տեղւոյն 'ի ժամանակին յայնմիկ : Ալ Թողացոյց վերին խնամակալու թիւնն զիրսդ առ ժամն . քանզի մեծագունի պատուոյ պահեալ էր զնա , ոչ միայն յարքունիս Վաղղիացւոց՝ այլև բազում ազգաց և Թագաւորաց ծանօթ և բարեկամ առնել զնա :

ԺԹ . Վայր հասանէր ապա դէս ժամանակ՝ զի անձամբ երևեսցի տեղեաց տեղեաց , և ընդհանուր ծաւալեսցէ զհոտ անոյշ զիտութեան իւրոյ . զի պէտք սեղանաւորելոյ զաստուածային բանն զկողմամբք Վրանսի վանիոյ առ մերազնեայ ժողովուրդն՝ հարկաւորելին զԱբբահայրն Ստեփաննոս Սեղգոնեան՝ յղել անդ զՍտեփաննոս վարդապետ յամին 1790 : Ադ 'ի մտի վարդապետս՝ ըստ պարտուց հնազանդութեան և առաքելաջան

մշակու թեանն զորս ուխտիւք հաստատնովք յան
 ձին կալեալ էր՝ հատուցանել հայրենի երկրի
 ծննդեանն իւրոյ լի և զեղուն ընդ դաստիարակու
 թեան զոր 'ի մանկութեանն ընկալաւ : Յաղագս
 որոյ սպառազինեցաւ հաւատով 'ի սպասաւորու
 թիւն աւետարանին, կազմ և պատրաստ՝ ցօղել
 զանձրև վարդապետութեանն ընդ բովանդակ նաւ
 հանգն, անխտիր 'ի սիրտս արգաւանդս և ցամա
 քուտս : Օ 'ի թէպէտ հանապազօրեայ բնակու
 թիւն նորա 'ի Պաշպալով էր, այլ ուր պէտքն պա
 հանջէին՝ ընթանայր և յայլ մտաւոր քաղաքս և
 'ի գիւղս, գիտելով թէ յայն իսկ առաքեցաւ . ոչ
 զխտու թիւն եղանակացն խտրեաց, ոչ 'ի ճանա
 պարհացն գծուարու թեւէ զանգիտեաց, առ ամե
 նայն մարդ ընթացաւ, և զամենայն մարդ միխ
 թարեաց : 'Ի քարոզական բեմբասացութիւնն
 յեկեղեցիս՝ գիտաց բարիոր զուգակշռել զճոխու
 թիւն պերճախօսութեանն ընդ ազգեցութեան
 բանիցն աստուածայնոց, զի ըստ տանելոյ բաւա
 կանութեանն ունկնդրացն՝ զբանս իւր պատկանէր .
 որում տան վկայութիւն ինքնագիր օրինակք քա
 ռողիցն զորս յայնժամ բացախօսեաց, և զբազում
 ընդարմացեալ հոգիս շարժեաց և զարթոյց 'ի
 սերն Մտուծոյ : Կօսէր յաշխարհիկ բարբառ
 ըստ ոճոյ այնր նահանգի, այլ հզօր և ազգոյ, առ
 գոր գիտութեամբ, և քաղցրութեամբ սքանչելի .
 մինչև զի որ միանգամ լսէրն՝ այնպէս հաստատու
 թեամբ գնէր 'ի միտմն՝ թէ առ ոտս խաչին խոր
 հեցաւ և գրեաց զբաննն զայնտիկ :

Ի. Օ առաւելն է ասել վասն գործոյ խոստու
 վանահայրութեանն, զորոյ զարդասեացն զհա
 մար նա միայն գիտէ՝ յորոյ 'ի մատենին գրեցան
 անուանք փրկելոցն 'ի ձեռն վարդապետիս . զի

ընդ բազմել անդ յաթոռ խոստովանութեանն՝
 առ ծնդամբք և առ ոտիւք նորա բոլորէին ապաշ
 խարողացն դառք յամենայն ՚ի կարգաց. և յայսմ՝
 անդադար էր նա՝ թէ ոչ կարևոր հարկ ՚ի պէտս
 հիւանդաց կամ միսիթարութեան՝ այլուր հրաւի
 բէին զնա : Համարէր նա թէ ժամք առուրցն ոչ
 վասն իւր ինչ են, այլ վասն այլոց. վասն որոց
 երկայնմնութեամբ, աստուածային նախանձու,
 քաղցրութեամբ և ճարտարմնութեամբ յերկա
 րէր ՚ի գործ խոստովանութեանցն. ոչինչ խտրե
 լով ընդ մատուցեալն. այլ ըստ առաքելոցն՝ ընդ
 ամենայնի ամենայն եղեալ, զի զամենեսին զնոսա
 շահեսցի ՚ի Վրխատոս : Վ ամին գովելի հանդիսա
 ցոյց զգիտութիւն ընտրութեան հոգւոց՝ յորում
 քաջ էր և ներհուն. քանզի ձեռն արկեալ առաջ
 նորդէլ մնորբելոց յուղղութեան ճանապարհն,
 ՚ի վար արկ զքաղցրութիւն և զխորագիտութիւն՝
 որսալ և ՚ի կատարելութիւն անդր տանել զնո
 սա. սակայն մի լիցի կարծել այնպէս՝ թէ քաղց
 րութիւն նորա և հեղութիւն յամենայնի ներողութե
 միտ երեւեցուցանէր զնա. քանզի գիտէր խառնել
 ՚ի նոյն զանկէհեր արիութիւն՝ երբ անդարման
 մնային անկարգութիւնք և արհամարհութիւնք
 զօրինօք Տեառն : Մ յս իմաստուն անտեսու
 թիւն նորա ՚ի իննամն հոգւոց՝ շարժեաց զա
 զումն՝ խորհուրդ հարցանել ՚ի նմանէ յիրս կարև
 որս. նաև յոլով անգամ զնա ինքն ընտրել դա
 տաւոր իրաւարար բազմադէմ իրաց, և ՚ի նա
 գլխովին ապաստան առնել զհչում թիւն արարոց
 ծանունց : Ա շ ա յս այնու առաւել՝ զի տեսանէին
 զնա զեկալարել զգործս մեծամեծս ոչ նենդու
 թեամբ և պատիր խաբէութեամբ, այլ որպէս
 արժան է կրօնաւոր վարդապետի՝ անկեղծու

Թեամբ և Ճշմարտութեամբ . Թողեալ աշխարհականաց զաշխարհի հնարագիտութիւնն . վասն զի 'ի լաւութիւն և յօգուտ իւրաքանչիւր ակն եղեալ էր , անտես արարեալ զիւրոյ անձինն շահու և զգիւրութեամբ :

Ին . Կժուարին է սահաւուք բովանդակել զեռանդն նախանձու նորա 'ի հաշտեցուցանել զտարածայնութիւնս . արկանել խաղաղութիւն 'ի տեղիս ուստի տարագիր էր սէր և խնդութիւն . խափանել զանկարգութիւնս . միօրինակ ջանալով անդանդազ վասն ազքատաց և մեծատանց , սուկականաց և աւագաց : Յայսմ ամենայնի ըստ իւրաքանչիւր իրացն՝ զանազանաբար հնարէր զգարմանն և զսպաքինութեանն օրինակ . որոց 'ի բարիոքն կատարումն՝ յայտ առնէր զնորայն զգօնութիւնն և զքաջութեամբ առաջնորդութիւն 'ի ճանապարհի Տեառն : Թողում ասել զնորա նպաստն 'ի հոգեվարս հիւանդաց՝ 'ի քաջալերելն 'ի զօրացուցանելն յետին յայսմ տազնապող պաշուն՝ արութեամբ պատերազմել զմարտն հաւատոց , և աներկիւղ անցանել ընդ փորձութիւնս այսոցն օգականաց :

Իբ . Օայսօրինակ նահատակեալ նորա յասպարիզի առաքելութեանն , ամենայն մարդ փառս անձին գրէր՝ ընու գործով զազգոյ իրատս նորա զսերմանեալն 'ի սիրտս նոցա յեկեղեցիս , կամ յառտնին վարդապետութիւնս , կամ օրինակաւ վարուց իւրոց , և ընդ հակառակս ելանէին զմիմեամբ՝ պատուասիրել զնա . և ակնարկութիւն նորա միայն՝ աստուածախօս պատգամ համարեալ էր առ նոսա : Տեսեալ Ստեփանոսի վարդապետի թէ յամենայն կողմանց դուռն բաց է նմա յաւետարանն Ըստուծոյ՝ խորհուրդ բարիօք հաստատ

եաց 'ի միտս իւր՝ զայն ամենայն եռանդն ժողովրդեանն շրջել յօգուտ նոցա և 'ի բարին. և սատաճառս տալ առաւել ևս յորդելոյ առ Մատուած սլաշտօնասիրութեանն: Յաղագս որոյ հոգացեալ նախ յառժամանակեայ նորոգութիւն բնակութեան վարդապետաց մերոց, յետ այնորիկ ձեռնարկ յօժարակամ տրուիք ջերմեռանդն ժողովրդեանն 'ի շինուած նորոյ եկեղեցւոյ. զի զառաջին խաթարեալն և զխրթին քակեալ՝ 'ի հիմանց բարձրակերտեաց տաճար օրհնաբանութեան Մատուածոյ. ուղղեալ 'ի նմա սեղանս երիս, առ նմին և զանգակատուն, առ հասարակ վայելուց և գեղեցիկ ճարտարապետութեամբ: Յայսմ ամենայնի որչափ փառաւորէր անուն նորա, և սատակառելի երեւեր առաջի զանազան ազգաց բնակչաց կողմանցն այնոցիկ, ինքն առաւել ևս ցածնոյր յինքն 'ի խոնարհութեան իւրում. յայն միայն դէտակն կալեալ՝ զի փառքն յՄատուած գրեցին, և օգուտն 'ի ժողովուրդ անդր դարձցի. սա հեալ ինքեան զանպաճոյճ խոնարհութիւնն: Ասն զի առ այնքան մեծամեծ արարուիք իւրուիք հոգացաւ ծածուկ սահել յամենեցուն զանուն իւր և զյիշատակ. այնչափ՝ զի յորժամ ոմն յազգականաց նորա յազնուականաց սաստիկ բռնադատութեամբ ետ նկարել զպատկեր նորա՝ ունել զայն յիշատակ 'ի տան իւրում, արգել սա՝ դրոշմել 'ի նմին զանուն իւր. այլ փոխանակ ընդ այնր զբան սաղմոսերդողին. * Ինձ մերձենալ առ Մատուած բարի է: Մայսչափ էր խոնարհութիւն նորա:

Իք. Իբրև այսպէս արդիւնք և խոնարհութիւն լծեալ երթային առաջի անուան նորա, զհամբաւի հարաւ վախճան կենաց Սեղգոնեան Մբբաժօր Ստեփանոսի առաջնոյ՝ անընդմէջ և արժաւ

նաժառանգ յաջորդի մեծին Մխիթարայ . և սու
 ինքն Ստեփանոս վարդապետ Մշոնց՝ հանդերձ
 այլովք երիցազուհիք որ՛ի կողմանս կողմանս աչ
 խարհի՛ կուէցաւ ՚ի Ս Կնէտիկ ՚ի սուրբ Վ աղար՝
 յօրինաւ որ ժողով ընարու թեան յաջորդին՝ թա
 ղեալ յայնժամ զհօան ՚ի թախիժ արամու թեան՝
 որպէս այն թէ անառաջնորդ մնան ՚ի մեկնել հօր
 խրեանց և հօլուի , եւ յողջոյն հրաժարական
 Սարգանճի արքեպիսկոպոսին Վրանախլվանիոյ ,
 որում արդէն ծանօթ էր , և վաստակք իւր լիա
 բերան զովու թեամբ պատմեալ առաջի նորա . ՚ի
 սուգ արամու թեան հարաւ եպիսկոպոսն ընդ
 դարձն նորա , այլ քաջալերեալ զանձն , սասց
 ցնա . Վ իմեալ երթաւ ՚ի Ս Կնէտիկ , ուր ՚ի մնաց
 խմբեացին կրկին ժողովք . մին յընարու թիւն զլիոց
 եկեղեցւոց , երկրորդն յարբայու թիւն Մխիթա
 րեանց . թէ ոչ յառաջինն՝ յերկրորդումն անշուշտ
 ընտրեացիս զլուի Մխարանու թեանց . Օ այս
 բան եպիսկոպոսն ոչ այնչափ սատուածային ազ
 ցեցու թիւն արդեօք իմանալ պարտ իցէ , որչափ
 քաջայայտ նշանակ սքանչելի անուան և վարուց
 վարդապետիս , որում պատկանաւոր դասեր նա
 զառաջնորդական իշխանու թիւնն . Ելեալ ՚ի ճա
 նապարհ , ապրեալ լինէր Տերամբ ՚ի պետպէս ար
 կածից . որպէս և երբեմն ՚ի Վրանախլվանիս իբրև
 հարկ լինէր անցանել կառօքն ընդ կամուրջ մի՛
 ընդ որով էր խրամ խոր , վտանգ էր հասեալ երկ
 վարացն ՚ի խրամ անդր գահավեժ սուրալ՝ հան
 դերձ կառօքն և ՚ի միջի եղելովքն , հարում վայ
 րի եղև վարդապետին ամբառնալ զմիտան առ Մա
 սուած , և ՚ի նմանէ իննիմեկ զհնարան . ՚ի տաղ
 նապի անդ յիշելով և զհօլիս ննջեցելոց՝ յորս
 քերմեռանդն էր միշտ , և ահա՛ շցիտեմ որպէս

(ասեր ինքնին), 'ի հանդիսակողմն գտան կառքն, և երխլարքն հանդարտաբայլ, և կառավարն 'ի գլուխ նոցա Վոհացա ընդ նորանշան սրանչեիան, և զխոաց՝ զի գործ էր Մատուծոյ, և ոչ մարդոյ : Մրդ զանց արարեալ զրազում օթեանօր և յոյսմ՝ ուղեկնացու թեան, և հասեալ ողջանդամ մինչ 'ի Սիեմա մայրաքաղաք՝ անդէն անազանեաց աուրս բազումն վանն կարեւոր գործոյ Սիարանու թեանս յարբունի գրամն . ուր յանդիման եղեալ Վոյսերն՝ մեծարեցաւ 'ի նմանէ, և ծանօթացաւ յոյունց յաղնուականաց անտի, որք ծանօթ էին և ազգատոհմի նորա. որպէս և Վոյսերն զլիսովին :

Ինչ. 3} Եւ 'ի գլուխ հանելոց զգործն՝ հասաներ 'ի գէմ եղեալ տեղին՝ ում մնայր ժողովն գումուրեալ յընարու թիւն օրինաւոր զլիսոյ Սիարանու թեանս : Սաստակոյն նորա առաւելու թիւն, հանրանոյն փող բարձրաբարոզ, առաքինութեանոյն անուշահոտութիւն, բաժու թիւնն 'ի գործ առաջնարդական, տեղեկութիւնն յամենայն անցս Սիարանու թեանն, պերճ՝ զխոութիւնն, արքայապանձ ընտարութիւնն, հասակ և զխոակ մարմնոց բարձր և վայելուչ՝ ճնկեր ըզսիրտս ամենեցուն՝ զՎարայու թեան զմկարագիրան 'ի նմա տեանեւելալ, և ահա վիճակն և ընտարութիւն զնա վերակուէր 'ի բարձրագոյն ամուսն յամին 1800 . 'ի նոյեմբերի 9 . և ամենեքին ցնծան ընդ առաջ նորա 'ի գահ անդր մատուցանել : Այս ինքն միայն՝ որ և ոչ ընդ միտս անգամ հասանեալ էր իրացո՞ խոովէր ընդ այն, զոյն հասանէր յերեւոյն, և ահ պատեր գնովաւ . արտասուէր ազաւէր՝ թոյլ առնել անձին 'ի ծանր գործոյ անտի, զանբուականութիւնն առաջի մատուցանե-

լով : Յայտնի կացոյց նմա ժողովն թէ վայրապար
է զգէմ ունել աստուածեղէն ընտրութեանն՝ որ
զտկարս ընտրէ և զօրացուցանէ քան զՏղօրս .
յուշ լինի քեզ ասէն , և զոր ասաց սրբազան
Պապն Պիոս՝ յընտրիլ իւրում 'ի պետրոսեան աւ
թոռ 'ի սմին տարւոջ 'ի քաղաքիս յայսմիկ . Եւ
տուած զիս զյետնեալս ընտրեաց ասէ , զի ցուցցէ՝
թէ յայսպիսում ժամանակի ոչ մարդ է զեկաւ
վար եկեղեցւոյ իւրոյ , այլ Եստուած ինքնին . և
դու 'ի նոյն միտս յանձն առ զընտրութիւնդ 'ի
զլուխ Սիաբանութեանս : Յաղթեցաւ զիջաւ .
զայս միանգամ նկուն եղև , զի միշտ յաղթանաւ
կեսցէ . խոնարհեցոյց զզլուխ իւր՝ նուիրեալ Ես
տուծոյ բովանդակ զանձն իւր :

Ին . Յայնմհետէ ակնարկեալ 'ի պարտս իւր ,
և յընդարձակութիւն գործոյն , խելամտեաց բնաւ
տուր զգօնութեամբն թէ զգուշութիւն կանոնաց
Սիաբանութեանն ամենայնիւ անհրաժարելի է ,
զի 'ի նոսին հիմնացեալ է շինուածն ուջ , և նո
վին բարգաւաճէ կամաւոր և օգտակար յանձն
առութիւնն՝ օգնելոյ հայրենի ազգին հոգևոր
մշակութեամբ , և ուսումնական հրահանգօք : Եւ
տես դարձեալ և զայն թէ մարդկային տկարու
թիւն բազում ուրեք մեղմութիւն խնդրէ 'ի
քաղցր օրինացն պահպանութեան՝ վասն իրաւացի
պատճառաց . իբր զի կանոնք վասն մարդոյ եղէն ,
և ոչ մարդ վասն կանոնաց : Յաղազս այտոցիկ
առաջին գործ եղև նորա ըստ պատշաճի առաջ
նորդական պարտուցն՝ արթնութիւն սքանչելի ,
առ 'ի խնամել և 'ի քննել զառ 'ի նա հաւատաւ
ցեալն . զի աչք նորա և հայեցուածն յայտնաւ
պէս քարոզէր զայդ 'ի նմա . բացարձակ կալաւ
ընդ հեռաւորս զտեսութիւն մտացն , և բազում

ապագայից եղև նախահայեաց, որով մարթացաւ
 զբազմաց անսպառնաճութեանց զառաջս առնուլ,
 և գործել ուղղութիւն բազում: Արկրորդ՝ փու-
 թացաւ անխտիր տարածանել զգութ իննամոց
 իւրոց առ ամենեսին, գիտելով թէ ամենեցուն
 նոցա հայր է. և զի բարեգորով հայր ոչ ումբ
 սակաս առնէ զինամին, ոչ սակասեցոյց և սա
 զգթասիրութիւնն և զհոգ: Վիտելով թէ ամե-
 նեցուն հովիւ է՝ ըստ օրինակի քաջնթաց հովուի
 տկարացաւ ընդ տկարացեալն, տրտմեցաւ ընդ
 տրտմեալն, ջլբիսկեցոյց և ոչ զմին յաչացն, զի
 զամենեսին տաւաղեցուցէ՝ ի սարարտարօտ ճա-
 ըակ վարդապետութեան իւրոյ. յաղագս որոյ
 զամենայն իշխեցեալսն անձուկ կասանօք սիրոյ
 կասեաց ընդ անձին իւրում: Արրորդ՝ որպէս
 ինքն էր՝ ջանացաւ նմանապէս յարդարել կազ-
 մել զՎիաբանութիւնս. որպէս ինքն լուսափայլ
 ունէր զճանապարհս իւր առ Մատուած, որպէս
 ինքն նախանձաւոր էր յառաջադիմութեան ազգի
 իւրոյ յամենայն հրահանգս բարեաց՝ ի նոսին վա-
 ռեաց զամենեսին: Մյս ճշմարիտ է, և ամենայն
 մարդ խելամուտ է ի սրտին իւրում, թէ ուր
 գլուխն քաջառողջ է՝ զուարթ են և ամենայն ան-
 դամքն, զի ի գլխոյ և յուղոց ազգի նոցա շար-
 ժումն կենդանական. ուր առաջնորդն ժիր է՝
 ժրագոյն են ընդ նմա և ամենայն առաջնոր-
 դեալք: Յայս տքնեցաւ Ստեփանոս Մբբահայր
 Մշոնց. և որպէս հաւանեալս եմք՝ ոչինչ վրի-
 պեաց յակնկալութենէն. քանզի երբ լիք է թող
 զկեանսն, ընդ կենդանի աստուածսիրութեանն
 զոր ընկալեալ ի նախորդաց իւրոց արձանացոյց
 անեղծութեամբ, այնպէս շտեմարանեալ ունէր
 զմեր Ղեմարանն զանազանութեամբ գպրու-

Թեանցն և լեզուախօսութեամբք, մինչև փոքու այսր մենարանի զմեծաց համալսարանաց բերել զնմանութիւն. նա և առաւելագունին ակն եղեալ էր հաստատուն կարգաւորութեամբ, եթէ յեղաշրջութիւնք ժամանակացս ներէին իրացդ :

Ի՞նչ. Օրարձացեալ Սիաբանութեանն ընդ շահսն կթեալս 'ի նմանէ, միաբերան ամենեքին խորհուրդ բարեաց կալան յանձինս՝ վիճակեցուցանել զՄբբահայրն Ստեփանոս 'ի պատիւ արքեպիսկոպոսութեան՝ առ 'ի պէտս ձեռնադրութեան աշակերտելոցն: Սակայն այլ է խորհուրդ մարդկեղէն, և այլ՝ հրաման կամացն Մատուծոյ. բազում այն է զի Մատուծ և մարդիկ 'ի մի և 'ի նոյն յօժարեն. այլ Մատուծոյ խորհուրդն անհետադօտ է, և մարդկանն չափաւորեալ: Իւրայել՝ Թազաւոր խնդրէր 'ի Տեառնէ, զի առաջ նորդ լիցի պատերազմի իւրեանց ընդ Թշնամիս. Մատուծ՝ բաց 'ի պատերազմի յաղթութեանցն՝ զահ և զերկիւղ Թազաւորաց նոցա յընդհանուրս տարածեաց: Բան ժողովոյ Սիաբանութեանն այս էր. առ 'ի պէտս ձեռնադրութեան ունել զեպիսկոպոսութիւն: Մատուծոյ խորհուրդն այս էր. ընդ տիեզերս հռչակ հարկանել զանուն նորա: Իբրև մատուցաւ հայցուածն յատեան Պէտրոսեան գահուն՝ Պիոս Լ, անմահութեան արժանացեալ հայրապետ՝ ծանուցեալ զհամբաւ և զվաստակ Մբբահայրն՝ կամակար շնորհեաց նմա զարքեպիսկոպոսութեան իշխանութիւնն յանուն և 'ի պատիւ նահանգին Սիւնեաց, և օժաւ յԱ՞ն դօնելիայ ականաւոր կարտինալէ անդ 'ի հռովմ յամին 1804. 'ի յունիսի 3: Գարձ արարեալ 'ի հռովմէական հրապարակէն զայր հասանէր 'ի Սէնէտիկ՝ իբրև երկրորդ Սովսէս 'ի սինէական

աստուածխօտութենէն՝ փառաւորեալ աթոռովն,
 և թագիւն, և իշխանութեամբն, առաջին 'ի
 Սիւրբաբեան տոհմէ Մարբեպիսկոպոս, և առա-
 ջին 'ի նմին տոհմէ 'ի քահանայութիւն օծանել
 զաշակերտեալն: Ոչ տարադէպ արտուղեաց
 բանս՝ յիշել զՍոլսէսի նմանութիւնն, զի որպէս
 նա աստուած Փարաւոնի, և հեղ էր բան զամե-
 նայն մարդիկ, նոյնպէս և սա յամենայն վիճակէ
 մարդկան պատուեալ, և բնաւ չմոռացաւ զհեղու-
 թիւնն. զի ազնուականաց պատկառելի էր առ
 վեմ և վեհ բարուցն. սոսկականաց երկրպագե-
 լի՝ իբրև այր Մատուծոյ. կրօնաւորք իւրաքանչիւր
 զհիմնադիր կարգաց իւրեանց 'ի սմա կենդանաւ
 գրէին, և այնպէս զարժանին նուիրելին պատիւ,
 քահանայք իբրև յիւրեանց առաջնորդէ ակն ա-
 ծէին. օտարք և հեռաւորք զթուղթ և զօրհնու-
 թիւն սորա ընդունէին իբրև կենսառիթ չնորհա-
 բաշխութիւն: Աշանաւոր գտաւ 'ի նոսա հայկա-
 զուն ասպետն Մղէքսանդր Սաֆայէլ՝ Արա-
 մեան՝ բնակեալ 'ի Անդոն Մագղիացոց. որ 'ի
 լուր սրբութեան Մբբահօրն ջերմութեամբ վա-
 ռեալ, մինչև տեսեալ զնա՝ փափաքեաց զպատ-
 կեր կերպարանաց նորա առ իւր ունել, որպէս
 թէ զնա ինքն գլխովին յանդիման աչացն ունիցի:
 Ասան որոյ ընկալեալ զուրուագիծն՝ ետ փորա-
 գրել զնոյն 'ի պղնձի, և տպագրութեամբ յընդ-
 հանուրս սփռել. այն իսկ է որ 'ի գլուխ գրոցս
 յաւելաւ: Օր և յօրինուածոյ բանիցս նա եղև
 յորդորիչ և հարկեցուցիչ, և տպագրութեամբ
 արձանացուցիչ:

Իհ. Օ այս ամենայն նախանշանակեալ մեծա-
 բանս բաբունասպետն մեր իբրև այն թէ իմացաւ
 և ոչ. զի առ պերճութիւնս աշխարհի անղգայ են

Հոգիք սրբոց : Հաստատեալ նորա յաւետարանու
 պատում՝ հրամանն՝ թէ պարտ է ատել զանձն
 առ յաւիտենից բարութեանցն հանդիպելոյ՝ չէր
 այլ որ նմա խիստ թշնամի իբրև զանձն իւր . ոչ
 թողոյր առաւելու թիւն տալ նմա առ այլովք .
 ոչ ներեր խտիր զնէլ նմա՝ ոչ ՚ի կերակուրս , ոչ
 ՚ի սպասս , ոչ ՚ի վանական կարգաց կատարմունս .
 որպէս թէ մոռանայր զառաջնորդութեանն պա-
 տիւ , զճգնողական վարուցն ժուժկալու թիւն միշտ
 առաջի աչացն ունելով . դժուարաւ և առ հարկի
 զգենոյր զեպիսկոսոսութեան պատուոյն պատմու-
 ճանն յաւուրս երևելի տօնից , կամ յայցելու-
 թեանն առ մեծամեծս . զի Սիաբանիցն հասարա-
 կաց տարազ առաւել սիրելի էր նմա : Եւ զկա-
 մաւոր ճնշել նորա և մեռուցանել զանձն՝ դժուա-
 րին է փոքու բանիւք համառօտել . բազում ահա
 նատեսք վկայեն՝ զի տեսանէին զնա յովով ան-
 գամ ծածուկ ՚ի սենեկին գետնամամձ տարածեալ
 առաջի փրկչական պատկերի՝ ողբովք և արտա-
 սուօք աղաչել զերեսս Ղարաբին՝ գթովք ակնար-
 կել յինքն և ՚ի Սիաբանութիւնն՝ Վանզի յայսմ
 ամենայնի զՍօղոսին առաջի եղեալ ունէր ըզ-
 բանսն , մոռանալով զառ ՚ի յետոյն՝ յառաջա-
 գէմն նկրտէր ՚ի կէտ կոչմանն Վրիստոսի . և
 զայդ իբրու կանսն անձին իւրում միշտ առաջի
 աչացն ունէր . քանզի գտաւ ՚ի հոգևորական գիրս
 նորա զորս աւուր աւուր ընթեռնոյր՝ պատառ մի
 թղթոյ , գրեալ ՚ի նմա այսպէս . * Օգոյշ լիցին
 ,, ամենեքեան առ ՚ի չկորուսանել ՚ի ծերութեան՝
 ,, զոր ստացան ՚ի մանկութեան . մինչև իցէ նա-
 ,, լու հասեալ ՚ի նաւահանգիստ , ոչ որ վտատհաս
 ,, ցի ՚ի կեանս իւր . միշտ գուն գործեսցէ լաւ ևս
 ,, ծառայել Ղստուծոյ ॥ : ՂՅԼ ՚ի կարևորսն ճե-

պէցուցանելով զընթերցողսն, առաջի արասցուք նոցա զչորեսին զայսոսիկ. զարիութիւնն 'ի վիշտս. զանյիշաչարութիւնն. զհանձարն, և զքաջութիւն հաւատոցն :

Ի՞նչ. Որչափ որ 'ի ղեկավարութեանն արթուն է նոյնչափ և 'ի յարուցմունս հակառակացն անխռով. վասն զի կանուխ տեսանէ զլինելիսն, և 'ի հնարագիտութիւնն աճապարէ. յազադս այնորիկ յայնպիսում՝ ժամանակի յառաջնորդական պատիւն ամբարձ Մատուծոյ նախախնամութիւնն զՍտեփանոս՝ զի անդրդուելի քաջութեամբն զամենայն ներհականսն փշրեցէ : Մյլափոխեցան առ նովաւ ամենայն քաղաքական կարգք. նա և համօրէն Նւրոպէ դըրդեցաւ 'ի կայից. բազմադիմի կարգք կրօնաւորաց հաստատեալք ամբայեալք 'ի դարուց հետէ, ծաղկեալք և բազմայեալք 'ի մէջ ազգի իւրեանց՝ խախտեցան, ըստ թոյլ տալոյ անքնին դատաստանացն Մատուծոյ. յայտ ամենայն յուզմունս՝ զգօնութիւն սորա աջակցութեամբ իւրոց խորհրդակցացն գիտաց ոչ միայն անդրդուելի պահել զիւր Սիաբանութիւնն, այլև յաւելուլ 'ի հաստահիմն ամբութիւնն սորա : Մնմարթ է գրով յայտնաբանել, որով օրինակաւ գերծ կացոյց զհօտ իւր փոքրիկ 'ի կոհակաց ալեաց կուտակելոց 'ի վիճակ Սէնտկեան յամի 1806. յերեսաց Վաղղիացւոց զօրացելոց անդ. մինչև անձամբ անվէհեր յանդիման լինել զօրավարի նոցա, և պատկառելի և ակնաձելի ձևով և բանիւ ելի ազադս գտանել. և անմերձենալի պահել զիւրսն յամենայն հարստահարութեանէ : Սոյնպէս և յամին 1810, յորժամ սաստիկ հրամանաւ Վաբօլէօնի ինքնակալի բարձեալ ջնջեցան ամենայն վանորայք և կրօնաստանք,

և հարց փորձ իմն 'ի հեռուստ մատուցանելին առ մեզ, սա ինքն միջնորդ կալեալ զկուսակալս Ղաթալիոյ, աղաչեաց զերեսս ինքնակալին, և հրովարտակ ընկալաւ 'ի նմանէ՝ յաւերժ հաստատուն մնալ իւրում հօտինս: Օ արմացաւ ամենայն մարդ որ լուան՝ թէ ուր թագաւորն ջնջէր զիւրսն, զօտարին պահեաց. վասն զի Ղստուծոյ էր դործն՝ որ դարձուցանէր զսիրտ թագաւորին ուր և կամէր:

Ի թ. Ղ մէջ մատուցանել արժան է և զանյիշաչաբու թիւնն և զխաղաղասիրութիւնս: Յորժամ բան սարկութիւն թշնամեղն ազգի մարդկան դղրու գեցոյց զազգ մեր 'ի խնդիրս խիթալիս, և իբրու զամն հինգ արեկսծեալ տատանեցոյց քակտելով և զողջամիտս 'ի միմեանց, սա Ղստուծոյ խնդրեաց աղօթիւք, առ մարդիկ դրեաց և յորդորեաց՝ միշտ զխաղաղութիւն խնդրել, զանձին և զիւրոցն անարդանս ոչինչ համարեցաւ, այլ հանապաղ այս էր մտածութիւն նորա, զիսրդ կարասցէ անհետ առնել զաղմուկն զայն. ցանգ տիրէր և հագայր, զի նախահայեաց մտօքն կանուխ տեսանէր զամենայն զլինելիսն. և որպէս գուշակեացն՝ նոյն պէս և կատարէր: Յաղազս այսորիկ ստեպ հրամայէր օրըստօրէ միաբանական աղօթիւք խնդրել Ղստուծոյ զխաղաղութիւն աշխարհի, և զատելութեանն քակտումն 'ի սրտից մարդկան: Ղուան երկինք արժանահայց խնդրուածոց նորա, և պարգևեցին նմա տեսանել և ընդունել 'ի ծելութեանն ընդ պտղոյ աղօթիցն և զհասարակաց խնդակցութիւն. ընդ որ ցնծութեամբ դոհանայր զՂստուծոյ: Տակաւին այսօրիկ նիազ են. զի յայս ամենայն անցս տեսեալ և լուեալ զառանձին եպերանս և զլուտանս ոմանց ոմանց ընդդէմ՝

ղեկավարութեան իւրոյ, կամաւ անդիտացաւ . ներեաց ՚ի կամակար սրտէ, և յիշատակեաց բնաւ ոչ : Օ ՚ի զայն ամենայն ոչ միայն ՚ի սնտախ հա մարէր, և տղայական մտաց զայրոյթ, այլ և ան արժան վարկանէր իւրում մեծութեանն և բազ մադէմ՝ զբաղանացն՝ յանարգան և յանսխտանս ժամավաճառ լինել : Վա՛ միշտ զՍողոմոնին կրկ ներ առ իւրնս, քաղցելոյ թշնամւոյն հաց տալ, զցրտացեալն ջերմացուցանել, զոխերիմն իբրև մտերիմ զգուել, կատարելով զքրիստոնէական սլարտուց պատշաճն, և զմեծախորհուրդ իմաստ նոյ, ըստ արժանի ազնուական բնութեանս :

Ը. Հանձար մարդոյ առաւել քան յարարս առ անձնականս՝ մեծապանծ երևի յարտաքինս, յորս գիտացէ որ զգոժուարինս և զներհականս առ հասարակ յիւր օգուտն շրջել : Յաւուրս իշխանութեան տեառն Ստեփանոսի երիցս փոխեցաւ տէրութիւն Սէնէտիկեան սահմանաց . երբ յաթուռն ամբարձաւ՝ Ղւստրիացիք տիրէին քաղաքին . յետ վեց ամաց անկաւ ընդ Վաղղիական իշխանութեամբ, որք կալեալ զամն ութ՝ անդրէն զարձուցին յՂւստրիացիս . յայս երրակի այլաձեւել քաղաքական իշխանութեանց, գիտաց Ստեփանոս Ղւստրիացի զամենայն զկուսակալս և զոստիկանս կապել ընդ իւր սերտ բարեկամութեամբ, և միջնորդ ունել զնոսա առ թագաւորս իւրեանց վասն իրաց իւրոյ Սիաբանութեանն : Սասն զի բաց ՚ի վայելչութենէն և յազնուական քաղաքավարութենէն՝ քաջ խելամտէր զնոսա նպատակի իւրոյ Սիաբանութեանն . այն է՝ վասն հասարակաց վաստակել . յազգային օգուտն տքնել . յայտ աբարեալ աշխարհի՛ թէ ոչ անգործ և սարապորդ է այս ընկերութիւն, այլ միշտ յաշակերտութիւն

զրոյ պարապեալ : Եւ այս ոչ բանիւք միայն, այլև արդեամբք . զի նախ ինքն նահատակեալ 'ի վաստակս զրաւորս, զառաջինն ընդարձակեաց փոքր մի զտպագրատունն, (առ 'ի չգոյէ յայնժամ ընդարձակ տեղոյ) . որպէս զի դիւրագոյն յաջողեացէ զործ տպագրութեանցն . յարդարեալ յօրինեաց վայելուչ շարագրածով զվարս մեծին Սիսիթարայ Ըբբաճօր, զոր ցանգ առաջի աչացն ունէր իբրև մատեան օրինաց, և նախատիպ առաջնորդական իշխանութեան իւրոյ : Եւ 'ի տիպարձանացուցեալ զայն, ասպա ձեռն արկ 'ի Տեսութիւն գրոց սրբոց . յորոց զՏնոց Ատակարա նացն աւարտեալ, և տպագրեալ 'ի չորս հատորս, յաւել 'ի նոյն պատրաստել և զՆորոյն Տեսութիւն յերիս հատորս . որ սկսաւ տպագրիլ 'ի վերջին առուրս նորա, և յետ վախճանի իւրում կնքեցաւ : Թո՛ղ զայլ ևս զրաւոր վաստակս նորա զլև տպագրեալն . յորոց առաջին է պատմութիւն Տիեզերական Սիւնհոգոսաց . անբաւ նա մակք նորա՝ ազգոյ բանիւք, և յղկեալ ոճով, և որ այլ ևս յօրինուած բազում : Ըյդ օրինակ նորա խրախուսեաց և զբազումս 'ի վարդապետաց Սիաբանութեանն 'ի փոյթ մատենագրութեան . ջանացեալ նորանոր զրոց յօրինամբ ձոխացուցանել զազգ մեր :

Ըն . Ձեռն արկ յետ այնորիկ վայելչազարգել և զողջոյն մենարանն՝ վասն պանծալի երևեցուցանելոյ զնա առաջի օտարաց, և բնակչացն 'ի նմա՝ հեշտին և զուարճալի : Բանդի և այս մեծի զգօնութեան գործ է . միշտ 'ի կարևորացն հանդերձանս պատկառ կալ . ոչ բազմածախ՝ թաղաւորաց հանգոյն, ոչ և գծուծ ընկեցիկ, այլ ազնուական և բարեյարդար, որպէս դիպողագոյն է

իմաստասէր կրօնաւորի . յաղաքս որոյ կանգնեաց
 'ի հիմանց առ ընթեր եկեղեցւոյն աւանդատուն
 մեծ և պայծառ , զի առաջինն փոքր էր և նսեմ :
 Ընդարձակեաց զՆորընծայարանն՝ աճեցուցեալ
 զբնակարանսն և զամենայն պէտս կարևորս : Հը
 բաման ընկալեալ և 'ի բարեգուծ ինքնակալէ 'ի
 վեհափառ Յրանչիսկոսէ Ը . մեծացոյց զկզկի վա
 նացն՝ առաւել քան որչափ էր յառաջն . յորում
 յետին առուրս ծերուծեան նորա կանգնեցաւ 'ի
 հիմանց մեծաշէն տպագրատուն՝ ամենայն մա
 սամբքն կատարեալ . և բնակարանք և դահլիճք
 վասն վանականաց : Յաւելաւ 'ի զբատունն նոր
 սենեակ բազմայարդար՝ 'ի պահարան հայերէն
 գրչագիր մատենից , նորանշան իրաց , և ընտիր
 ընտիր Ընդդիացի ուսումնական գործիարանաց .
 յորոց բազումք պարգևեցան Սիաբանուծեան
 յառուրս նորա , մանաւանդ թէ յանուն նորա :
 Օնց առնեմ յիշատակել զբազմադէմ զարդս
 և զնորոգուծիւնս վանացն 'ի սատարելոյ Սարե
 բարաց , և 'ի ժրուծենէ Սիաբանիցն : Ստացաւ
 յանուն Սիաբանուծեանն տուն , այս է 'ի շնորհս
 իւր և յանուն իւր հաճեցաւ ստանալ վասն մեր
 բարեբարն միաբանուծեանս Պարոն Ընդբասանդր
 Սաֆայէլ Ըսպետ , 'ի հռովմ քաղաք վասն իւ
 րոցն զորս յղեսցէ անդր՝ գլխաւորել զառ նոսա
 պատուիրեալն 'ի դիմաց իւրոց 'ի դուռն հռով
 մայ հայրապետին : Ըյս ամենայն պայծառազար
 դուծեամբք ճոխացուցեալ զՍիաբանուծիւնն ,
 և յաչս օտարաց երևեցուցեալ արգոյ և փափա
 քելի , 'ի վախճանին իւրում բազմազարդ եթող ,
 քան զոր էր՝ երբ կալաւ 'ի ձեռին զգործ իշխա
 նուծեանն :

ԼԷ . Խոստացաք յիշատակել զբաջուծիւն հա

